«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ Ազգային արժեքային համարգի ձևավորումը հայոց պատմության դասերին

Առարկա ՝ *Հայոց պատմություն*

Ուսուցիչ ՝ Աշոտ Ամիրյան

Դպրոց՝ Խ.Դաշտենցի անվան թիվ 114 ավագ դպրոց

Ղեկավար՝ Արմեն Ղուկասյան

ԵՐԵՎԱՆ – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ 4

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ

ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ..... 9

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....15

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18

Ես ճշմարտություններ գիտեմ, որոնցից մէկն ասում է՝ ուզո՞ւմ ես զուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդութեան։ … Մեր վաղը, մեր ապագան կախուած է մեր ներկայից։[1]

Գարեգին Նժդեհ

ՆԱԽԱԲԱՆ

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրակրթության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ։ Կրթությունը մարդակենտրոն գործընթաց է, ազգի հիմքը։ Ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան, հենց կրթության միջոցով է, որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին։ Եվ այդ ամենը կատարվում է հենց ազգային կրթության, մշակույթի և գիտության համակարգերի փոխգործունեության միջոցով ու կրթության ֆոնի վրա, որի ողնաշարն ու առանցքը արժեհամակարգն է։ Այն հիմքերի հիմքն է։ Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում են արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը։

Կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ։ Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների

[1] Գ. Նժդեհ, Հավատամք, Երևան 2011 թ., էջ 2։

(հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն:

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով:

Հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել և հիմնավորել հայ դպրոցականի ազգային արժեհամահարգի, ազգային մտածելակերպի ձևավորման գործընթացում պատմություն առարկայի դերն ու կարևորությունը, նաև պատմությունից դասեր քաղելու անհրաժեշտությունը: Դասաժամերի ընթացքում բացահայտել սովորողների վերաբերմունքը ազգային հերոսների, պատմական կարևոր իրադարձությունների վերաբերյալ, իրենց ունեցած գիտելիքները, վերհանել սխալները, թերությունները:

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի

ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող ամենանվիրական ու մեծագույն արժեքը հայրենասիրության դաստիարակումն է սովորողների շրջանում: Հայկական պետականությանը նետված մարտահրավերները հրատապ են դարձնում հայրենիքի ապագա պաշտպանների պատրաստման խնդիրը: Այս գործը մշտական կատարելագործման կարիք ունի: Պատահական չէ, որ պետական մակարդակով խրախուսվում է երիտասարդների ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Դրանում մեծ է ազգային հերոսների կերպարների հանրահռչակման և այդ ոգով աշակերտներին կրթելու նշանակությունը: Հայ ժողովուրդն իր պատմության ողջ ընթացքում հերոսների պակաս չի զգացել, որոնց շնորհիվ դիմացել է հազարամյակների դաժան փորձություններին: Այդ հերոսների օրինակով մենք կրթում և դաստիարակում ենք մեր սաներին, որոնք իրենց իդեալն են դարձրել այս կամ այն նվիրյալին:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Կրթության բովանդակության հետ կարևորվում է նաև ուսուցման մեթոդները,որոնք ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն

տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի, նպաստում են ընդունակությունները և ստեղծագործական գործունեությունը զարգացնելու եղանակների առաջացմանը, սովորողների գիտական աշխարհայացքի ձևավորմանը, արժեհամակարգի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը:[2]

Նախատեսվում է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

▪ լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին,

▪ կարևորի ազգային-պետական մտածողություն և գործելակերպ ունենալը ու դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք,

▪ ունենա ազգային ինքնագիտակցություն,

▪ կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,

▪ ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում,

▪ գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,

▪ գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը,

▪ գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն:[3]

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում

[2] Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ.:
[3] Արմինե Սարգսյան,Արման Մալոյան , Հայոց պատմություն 10-11 րդ դասարաններում:

է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողություն-ների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Այսպիսով, կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրողին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցությանը, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա

շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները։[4]

Սովորողների մոտ ազգային արժեհամակարգի ձևավորումն ավելի արդյունավետ կլինի, եթե.

1. Գրականություն-պատմություն փոխազդեցությունը դիտարկվի որպես զարգացման կարևոր և անհրաժեշտ գործընթաց և կրթադաստիրակչական գործընթացի անքակտելի մաս։
2. Մշակվի և հանրակրթության բնագավառում ներդրվի դպրոցականների ազգային արժեհամակարգի ձևավորման և զարգացման մոդելը՝ հաշվի առնելով ազգային և համամարդկային արժեհամակարգերի միաժամանակյա ուսուցման անհրաժեշտությունը։

Սա կնպաստի իր ինքնությունն ու քաղաքակրթությունների արժեհամակարգերը ճանաչող անհատի ձևավորմանը, որն էլ միտված կլինի իր գործունեությամբ նպաստել հայ և համաշխարհային հասարակության զարգացմանն ու վերափոխմանը՝ այն սկսելով իր անձից, իր սոցիալական ու բնական միջավայրից։

Դասավանդման հիմնական նպատակներից մեկը, բացի սովորողներին զուտ պատմական երևույթներին ծանոթացնելուց, անհատի հոգևոր ու մտավոր զարգացման, անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է, որի իրականացման համար անհրաժեշտ է սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին, պատմական հերոսների օրինակով նրանց մեջ սերմանել բարոյական արժեքներ՝մարդասիրություն, բարություն, ընկերասիրություն, ազնվություն, պատվախնդրություն, պատասխանատվություն, հաստատակամություն, բարեխղճություն և լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյակամային այլ հատկանիշներ։ Հայոց պատմության իմացությունը լայն հնարավորություններ է ստեղծում այդ նպատակների իրագործման համար։

[4] Ա.Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան 2002թ., էջ 65

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Փորձենք հասկանալ թե ինչպե՞ս է ձևավորվում ազգային արժեքային համակարգը հայոց պատմության դասերին: Չէ՞ որ հայոց պատմության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալու իրականացնելու իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը:

Հայոց պատմություն առարկայի դասավանդման նպատակը հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձևավորումն է: Առարկան նպաստում է պետականակիր գիտակցություն, ազգային ինքնա-գիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերա-կատարումը պատմության խորապատկերում գիտակցող քաղաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը:

Հայոց ազատագրական պայքարի դրվագները հայության ինքնահաստատման և դաժան գոյապայքարի վկայություններն են, որոնք ոգևորում են սերունդներին, սովորեցնելով քննախույզ մոտեցում դրսևորել անցյալի իրադարձությունների նկատմամբ, կատարել ճշմարիտ եզրահանգումներ և քաղել իրատեսական դասեր:

Ազգային և համամարդկային արժեքները յուրացվում են ողջ կյանքի ընթացքում ոչ միայն հատուկ այդ նպատակին ծառայող քարոզչության ու տարաբնույթ գործունեության ընթացքում: Մարդն ընդօրինակում է ազգային ապրելակերպը, յուրացնում լեզուն, մշակույթը, հոգեբանությունը և բազմաթիվ այլ որակներ՝ աստիճանաբար ձևավորվելով որպես տվյալ ազգի լիարժեք անդամ: Ազգային դաստիարակությունը ձևավորում է հայ մարդուն, սակայն համամարդկային արժեքներն իր մեջ չամփոփած հայը չի կարող լինել իր ազգի լիարժեք անդամ: Հայ դպրոցի, առհասարակ հայերի դաստիարակության կարևորագույն խնդիրն է՝ ապահովել ազգայինի և համամարդկայինի մեկտեղումը: Ուրեմն ազգային դաստիարակությունն իր մեջ պետք է ներառի նաև համամարդկային արժեքներ:

21-րդ դարում մեծ տարածում գտած գլոբալացման ճանապարհին կորսվում են ազգային արժեքներն ու դիմագիծը, և ամեն ինչ տանում է համաշխարհայնացման /գլոբալիզացիայի/, այդ պատճառով հիմա առավել քան երբևէ պետք է անընդհատ աշակերտների հետ զրուցել ազգային արժեքների դերի և կարևորության մասին, անընդհատ հիշեցնել, թե ովքեր են իրենց նախնիները, ինչ փառավոր անցյալ են ունեցել և որ մենք պարզապես իրավունք չունենք կորցնել այն, ինչ մեր պապերն իրենց արյան գնով պահել ու փոխանցել են մեզ:

Առաջնահերթություն է, որ աշակերտները բացահայտեն, հետազոտեն հայոց պատմության վաղնջական ժամանակներից մինչև մեր օրերը և վեր հանեն հույժ կարևոր փաստերից մեկը, այն է որ հայ ժողովուրդը եկվոր չէ, այլ ձևավորվելու պատմական ուղին անցել է իր բնօրրանում՝ Հայկական լեռնաշխարհում: Հայ ժողովուրդը, շփվելով և փոխազդեցությունների մեջ լինելով տարբեր քաղաքակրթությունների հետ, պահպանել ու զարգացրել է իր ինքնատիպ մշակույթը, ազգային նկարագիրն ու գոյապատկերը: Դրա շնորհիվ հայությունը հազարամյակների միջով հասել է մարդկության պատմության արդի փուլին: Ահա թե ինչու հայկական մշակութային հարուստ ժառանգության համակողմանի ուսումնասիրումը կազմել է դասագրքերի կարևոր բովանդակային ուղղություններից մեկը: Հայոց պատմության բովանդակային առանցքը կազմել է նաև հայկական պետականության պատմությունը, որը սերտորեն կապվում է նույն քաղաքակրթական խնդիրների հետ:

Հայ ժողովուրդը մշտապես ապրել ու արարել է մի տարածաշրջանում, որտեղ միշտ հատվել ու բախվել են տարբեր ազգերի ու քաղաքակրթությունների շահերն ու հակասությունները: Այս հանգամանքն ավելի կարևոր է դարձրել այս «քաղաքակրթական խաչմերուկներում» ազգային նկարագիրն ու դիմագիծը անաղարտ պահելու հանգամանքը: Մարդկության պատմության արդի փուլում հայ ժողովուրդը դարձյալ բախվում է այս խնդրին, քանի որ մեր տարածաշրջանում դարձյալ բախվում են աշխարհի մեծ պետությունների շահերը և յուրաքանչյուր երկիր փորձում է իր կողմը գրավել հայ ժողովրդին: Այս պայմաններում դարձյալ չափազանց կարևոր է առաջ գնալ ազգային ու պետական շահերը առաջնահերթություն ունենալու ճանապարհով և պատմական փորձը ցույց է տալիս, որ ինչպիսի ժամանակաշրջանի ծնունդ էլ լինեն

պատմության ընթացքն ուղղորդող անհատները, նրանք միջազգային հարաբերություններում պետք է լինեն զգոն և հավասարակշռված: Հատկապես փոքր ազգերի ներկայացուցիչները, գտնվելով մեծ տերությունների հետ շախմատային նույն հարթակի վրա, պետք է մտածեն ոչ թե հակամարտելու, այլ առավել՝ շահելու մասին: «Մեծերը» չեն ներում «փոքրերի» ինքնուրույն քայլերը: Այդպես եղել է անցյալում, այդպես է հիմա:[5]

Դպրոցականների ազգային մտածողությունը խթանելու նպատակով պետք է սովորողներին հանձնարարել լրացուցիչ նյութեր հավաքել, օրինակ, հայդուկների, ազատամարտիկների կյանքի, գործունեության վերաբերյալ:

Հայոց պատմությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա ՀՀ ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորության և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի և դերի մասին: Հենց այս պատճառով է, որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Հայոց պատմություն առարկայի ուսուցման նպատակները բազմազան են, սակայն առանձնացնենք նրանցից մեկը՝ զինել աշակերտներին ազգային արժեքներով:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաս-տիարակչական մի շարք կարևոր խնդիրներ.

1. Սովորողներին զինել հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակների հայոց պատմության ամբողջական գիտելիքներով, որոնց միջով պետք է անցնի ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համարպայքարին սեփական մասնակցությունը բերելու գաղափարը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից: Հայոց պատմության խոր իմացությունը կօգնի մեր

[5] «Հայագիտությունը դպրոցում» գիտամեթոդական վերլուծական հանդես, Երևան 2017 թ., էջ 22:

հանրապետության քաղաքացիներին կապվել մայր հողին, տեր կանգնել հայրենի տուն ու տեղին:

2. Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները, որոնք օրինակ կդառնան սովորողների համար, կոգեշնչեն նրանց և կմղեն հայրենիքին անմնացորդ նվիրվելու գործին:[6] Այդ գաղափարի հավաստիքն է՝ պատմական անցյալից եկող դասերին, դրանց իմացությամբ եղած մարտահրավերներին պատասխան տալուն պատրաստ լինելու հրամայականով ոգեշնչված <<Խուստուփի արծիվ>> Գարեգին Նժդեհի հետևյալ խոսքերը. «Հայրենասիրութիւն - մարդկային առաքինութիւնների թագն ու պսակն է դա: Մարդկային բարոյական յատկութիւնները իր մէջ միացնող այդ գերագոյն առաքինութիւնն է ազգերի գոյութեան անհրաժեշտ պայմանը եւ անսպառ աղբիւրը նրանց ոյժի եւ մեծութեան… Հայրենիքներն ապրում են հայրենասիրութեամբ, ընկնում՝ նրանց պակասի պատճառով»:[7]

3. Գաղափար տալ հայ մշակույթի , քաղաքակրթության, նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայ ժողովրդի մշակութային արժեքների և համամարդկային նվաճումների հետ: Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, պատմամշակութային կոթողներին:

4. Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը: Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ:

5. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի և կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները, ինչպես են ընտանիք կազմել, սնվել ու հագնվել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին: Ազգային կենարար ակունքներից սնվելը կօգնի նրանց ավել ուժեղ և ամուր կանգնել

---

[6] Ա. Ղուկասյան, Ա. Գյուլբուդաղյան,Հայոց պատմություն, 6-7 դասարաններ, ուսուցչի ձեռնարկ: Երևան, 2013թ., էջ 7:
[7] Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Երևան, 2006թ.:

հայրենի հողի վրա, զգալ հայրենիքի ուժն ու զորությունը: Անդրադարձ կատարել պատմական անցյալին:

6. Բացահայտել պատմամշակութային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները:

7. Բացահայտել պատմական ճշմարտությունը, նշել, որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից կարծիքների և տեսակետների, մտքերի ու գաղափարների բախումից: Դիցուք, ՀՀ երեք հանրապետությունները, որոնց տարածքային խնդիրներին ու անցյալի իրադարձություններին ծանոթանալով, անհարժեշտ է դասեր քաղել և կերտել պայծառ ապագա:

8. Դաստիարակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում: Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է: Դաստիարակել հայրենիքին անձնազոհ նվիրվելու, այն կյանքի գնով պաշտպանելու կամք ու վճռականություն:[8] Այդպիսի վառ կերպար է մեր պատմության ամենաթանկագին կերպարներից մեկը՝ հերոս Անդրանիկ Օզանյանը, ով հայրենիքը դասում է սեփական անձից վեր և դիմում անձնազոհության,արտասանելով հետևյալ խոսքերը. «Ես իմ կյանքում երբեք չեմ ձգտել անձնական երջանկության ու բարօրության: Ես մշտապես ձգտել եմ միայն մի բանի և պայքարել եմ միայն մի բանի՝ իմ հարազատ ժողովրդի ազատության և բարեկեցության համար: Ես չեմ փնտրում իմ վաստակի գնահատականը և ցանկանում եմ միայն այն, որ երջանիկ լինի այն ժողովուրդը, որին ես ծառայում եմ ամբողջ կյանքում»:[9]

9. Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնա-պատմական և պատմամշակութային այն միջավայրը, որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը: Ցույց տալ հայ ժողովրդի տեղն ու խաղացած դերը քաղաքակիրթ աշխարհում:

---

[8] Ա. Ղուկասյան, Ա. Գյուլբուդաղյան,Հայոց պատմություն , 6-7 դասարաններ, ուսուցչի ձեռնարկ: Երևան,2013թ. ,էջ 8:
[9] Անդրանիկ, Առաքելոց վանքին կռիւը:

10. Հասնել այն բանին, որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման, հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին:

11. Նպաստել մարդասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ և գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:

12. Ձևավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների, ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք ու կարողություն:

13. Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ: Առաջ բերել մարդկության առջև ծառացած հիմնահարցերի լուծման գործում իր ավանդն ունենալու ձգտում և ցանկություն:

14. Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները.

▪ խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը, մտածողության ինքնուրույնությունը, սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողություններ,

▪ ձևավորել պատմական դեպքերը, երևույթները համեմատելու , վերլուծելու, ընդհանրացնելու և կանխատեսումներ կատարելու, գնահատելու կարողություններ,

▪ զարգացնել ուսումնառության արդյունքում սովորողների ստացած գիտելիքները և տեսական դրույթները պատմական կենդանի նյութի վրա կոնկրետացնելու անցյալի, ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողություններ ու հմտություններ,

▪ զարգացնել սովորողների զգայական ընկալման, մտավոր և հուզական ճանաչողության բոլոր տեսակներն ու կամային որակները (լսողություն,

տեսողություն, կամք, համառություն) և մտավոր գործողությունները (համեմատում, համադրում և այլն)։

▪ սովորեցնել տեղեկատվության աղբյուրներից օգտվելու, ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվելու, անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու, մշակելու, վերաձևակերպելու, այսինքն՝ գիտելիք կառուցելու կարողություններ։[10]

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է այնպիսի թեմա , որն անկասկած շատ մեծ նշանակություն ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար։ Խոսքը գնում է ազգային արժեքային համակարգի ձևավորման մասին Հայոց պատմության դասերին։

Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապա-հովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ պատմություն առարկան։ Դպրոցում սովորողները Հայոց պատմության ծրագրի շրջանակներում ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին,ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարություններին ու կորուստներին։ Հայոց պատմություն առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող, հայ ժողովրդի և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի։ Այդ իսկ պատճառով արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում։ Յուրաքանչյուր աշակերտ պետք է

[10] Ա. Ղուկասյան, Ա. Գյուլբուդաղյան, Հայոց պատմությունը , 6-7 դասարաններ, ուսուցչի ձեռնարկ։ Երևան, 2013թ. , էջ 9։

իմանա, թե որպես հայ՝ ո՞րն է իր անելիքն այստեղ՝ հայրենիքում: Ազգային գաղա-փարախոսությունը պետք է հուշի սեփական պատմական առաքելությունը, որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը, իսկ երբ վերանում են արժեքների ձևավորման ազգային և համամարդկային ընդհանրական չափանիշները, արժեհամակարգի գոյությունը կամ բացակայությունը դառնում է ազգային-հասարակական կարևորության խնդիր, որովհետև արժեհամակարգը պետք է ձևավորվի ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

Հիմա հայ ժողովուրդն ու Հայաստանի հանրապետությունն ապրում են դժվարագույն ժամանակներ, երբ վտանգված է հայ ժողովրդի և հայոց պետա-կանության գոյությունը: Հիմա նոր Ավարայրի ու նոր Սարդարապատի կարիքը կա, հիմա առավել քան երբևէ պետք է համախմբվել մեկ միասնական բռունցք դառնալ, որպեսզի հնարավոր լինի հաղթահարել մեր պետության գլխին կախված հերթական վտանգը:

Ժամանակի հրամայականն է կրթել ու դաստիարակել ազգային մտածողությամբ ու արժեքներով տոգորված սերունդ, նրանց մեջ ներարկել հայրենասիրություն, համախմբածություն և սառը դատողություն: Բանավեճերի միջոցով նրանց ցույց տալ, թե ինչերի է ընդունակ իր հողն ու ջուրը ամեն գնով պաշտպանելու պատրաստ զինվորը, հայ գյուղացին ու սովորական հայ քաղաքացին:

Սովորողներին պետք է ոգևորել անցյալի պատմական հերոսական դրվագներով, թե ինչպես են փոքրաթիվ հայկական ուժերը հաղթել թշնամու բազմաքանակ ու լավ սպառազինված ուժերին՝ փորձելով հիմնավորել, որ հաջողության հասնելու գրավականն ամենևին էլ թվական գերակշռությունը չէ, այլ նպատակը՝ հանուն որի ելնում են պայքարի:

Հայ ժողովրդին բաժին է հասել դժվար ու պայքարով լի ճակատագիր, բայց նա միշտ պայքարել է ու իր զավակների արյան գնով ամրագրել իր գոյության իրավունքը: Սա էլ կանցնի, առավել քան համոզված եմ, որ հաղթանակը մերն է լինելու, քանզի մեր գործն արդար է, մենք պայքարում ենք մեր հայրենիքի յուրաքանչյուր թիզի համար, այլ

ոչ թե զավթում օտարինը, ուստի պետք է համախմբվել, մի կողմ թողնել բոլոր տեսակի տարաձայնությունները և ձեռնամուխ լինել ազգանվեր գործին՝ հայրենիքի փրկությանը:

Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ փայլուն սերունդ է մեծանում՝ համարձակ, պահանջատեր ու նախանձախնդիր: Մեր խնդիրն է նպաստել, ուղղորդել, որ նրանք հայրենասեր ու հայրենաճանաչ լինեն, իրենք են մեր ապագան ու մեր երկիրը շենացնողները:

Դպրոցական դասագրքերում, հանրակրթական և առարկայական չափորոշիչներում պետք է ավելի շատ ուշադրություն դարձնել ազգային արժեհամակագի ձևավորման հարցերին, ավելացնել հայագիտական առարկաներին հատկացվող ժամաքանակները, հնարավորություններ ստեղծել և, հատկապես ավագ դպրոցի աշակերտների հետ, հաճախակի կազմակերպել արշավներ դեպի պատմամշակութային հնավայրեր, որպեսզի նրանք մոտիկից տեսնեն ու ճանաչեն հայրենիքի ամեն անկյունը, հանձնարարել այնպիսի թեմաներ, որոնց ընթացքում սովորողները ինքնուրույն կհետազոտեն ու կբացահայտեն իրենց ծննդավայրի պատմությանը վերաբերող փաստեր:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գարեգին Նժդեհ, Հավատամք, Երևան, 2011 թ.
2. Գարեգին Նժդեհ, Հատընտիր, Երևան, 2006թ.
3. Անդրանիկ, Առաքելոց վանքին կռիւը, Երևան, 2012 թ.
4. Ղուկասյան Ա, Հայոց պատմությունը 8-9-րդ դասարաններում, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2013 թ.
5. Ա. Ղուկասյան, Ա. Գյուլբուդաղյան, Հայոց պատմություն, 6-7 դասարաններ, ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2013թ.
6. Արմինե Սարգսյան, Արման Մալոյան, Հայոց պատմություն 10-11-րդ դասարաններում, Երևան, 2014 թ.
7. Ա.Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան, 2002թ.
8. «Հայագիտությունը դպրոցում» գիտամեթոդական վերլուծական հանդես, Երևան, 2017 թ.
9. Սուխոմլինսկի Վ. Ա., Սիրտս նվիրում եմ երեխաներին, Երևան, 1977թ.